# Պարույր Սևակ

## Հարազատներ

Հարազատնե՛ր,
Ես չմեռա, ես մնացի նորից կենդան,
Ես ապրեցի ձեզնից հետո...
Հարազատներ, որ թաղված եք մայր հողի տակ,
Հարազատնե՛ր:
Ես տեսա այն, ինչ դուք տեսաք-
Դեմքը մահի,
Բայց ընկնելով անժամանակ,
Դուք չտեսաք՝ ինչ տեսա ես -
Մարտից հետո եկավ ապրի՛լ, եկավ Մայի՞ս,
Եկավ Մայի՛ս ու հաղթանա՛կ:
...Հարազատնե՛ր,
Ես ի՞նչ երգով ձեզ ետ կոչեմ,
Իմ՝ զինվորի ձայնը խուլ է, մինչ սիրտն է խոր...
Հարազատնե՛ր,
Կրկին ստեպն է կանաչել,
Որ խեղդվել էր թնդանոթի թանձր ծխով:
Կրկին հիմա խարտիշահեր կազակուհին,
Շրջելով նույն ստեպներով,
Հանկարծակի հիշում է սուր կատակ մի հին,
Որ ձեզանից մեկն է ասել նրան մի օր,

Ու ինձ նման՝
Չի իմանում ժպտա՞, թե՞ լա...
Եվ շշնջում է միայն.
Հարազատնե՛ր...

30.V.1947թ.
Երևան